Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 9. Քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը

Հայաստանի Հանրապետության վարչապետը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետն է:

Ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ղեկավարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալն է:~~Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ղեկավարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալն է:~~

Հայաստանի Հանրապետության նախարարները (գերատեսչությունների ղեկավարները), մարզպետները, համայնքների և կազմակերպությունների ղեկավարները համապատասխանաբար նախարարությունների (գերատեսչությունների), մարզերի, համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետերն են:

Լիազոր ~~Լիազորված~~ մարմնի Փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները մարզերի քաղաքացիական պաշտպանության պետերի տեղակալներն են:

Քաղաքացիական պաշտպանության պետերն իրենց իրավասության սահմաններում՝

ա) պատասխանատվություն են կրում քաղաքացիական պաշտպանության պատրաստականության համար.

բ) կազմակերպում և ղեկավարում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.

գ) հաստատում և գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները.

դ) արձակում են քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.

ե) վերահսկում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարումը.

զ) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 11. Լիազոր ~~Լիազորված~~ մարմնի իրավասությունը

Լիազոր ~~Լիազորված~~ մարմինը՝

ա) մշակում է քաղաքացիական պաշտպանության պլաններ և ծրագրեր, ապահովում է դրանք սահմանված կարգով հաստատման ներկայացնելը և կազմակերպում է դրանց կատարումը.

բ) համակարգում և վերահսկում է կառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը քաղաքացիական պաշտպանության բնագավառում.

գ) կազմակերպում է կառավարման մարմինների պատրաստումն ու բնակչության ուսուցումը.

դ) կազմակերպում է բնակչության ազդարարումն ու իրազեկումը.

ե) կազմակերպում է հատուկ, կարևորագույն օբյեկտների, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից վտանգավորություն ներկայացնող առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննությունը.

զ) համակարգում և վերահսկում է տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի կուտակման գործընթացը և դրանց նպատակային օգտագործումը.

է) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 19. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումները

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներն ընդգրկվում են Լիազոր ~~լիազորված~~ մարմնի կազմում, համարվում են մշտական պատրաստության ստորաբաժանումներ և նախատեսված են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրման, նախապատրաստման, մարտական կիրառման կարգը և իրավասությունը սահմանվում են օրենքով: